



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ**

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1/1

„01,,նոյեմբերի 2021 թվականի գ. Տեղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդազյույանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝

Տեղ համայնքի նորընտիր ավագանու թվով 15 (տասնհինգ) անդամներ՝

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Բաղդասարյան Նազիկ Մարատի
4. Ղուկասյան Արագած Արշավիրի
5. Միքայելյան Աննա Միքայելի
6. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
7. Դալլաքյան Արման Յուրիկի
8. Առաքելյան Վահե Վարդանի
9. Կարապետյան Արշակ Արամի
10. Սարգսյան Մասիս Պարոնիկի
11. Հովսեփյան Արգամ Ռադյայի
12. Գալստյան Ասպետ Սաղաթելի
13. Բաղդասարյան Կարեն Լորիկի
14. Հայրապետյան Հայրապետ Նորայրի
15. Զեյնալյան Մասիս Արամայիսի

որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդազյույանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են նորընտիր ավագանու բոլոր անդամները:

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝

համայնքի ղեկավարի տեղակալ Գագիկ Էյազյանը, աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդազյույանը, Արավուսի վարչական ղեկավար Արթուր Զհանգիրյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Կարո Ավանեսյանը և մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Սեյրան Ավետիսյանը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝ նիստը վարում է նիստին ներկա տարիքով ավագ անդամ Նազիկ Բաղդասարյանը (այսուհետ՝ նիստը վարող), ով հայտարարեց նիստի բացման մասին, հիմք ընդունելով թիվ 34 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021թվականի հոկտեմբերի 24-ի «Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 17-ի ընտրությունների արդյունքներով Տեղ համայնքի ավագանի ընտրվելու մասին» թիվ 42-Ա որոշումը՝ Տեղ համայնքի ավագանու անդամներ են ընտրվել «Ապրելու երկիր» կուսակցության ընտրական ցուցակից 5 անդամ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից 10 անդամ:

Թիվ 34 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021թվականի հոկտեմբերի 28-ի «Սյունիքի մարզի Տեղ ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» թիվ 2 արձանագրության, նիստը վարողը ներկայացրեց նորընտիր ավագանու անդամներին՝ կարդալով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, կուսակցության անվանումը.

«Ապրելու երկիր» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Հովսեփյան Արգամ Ռադյայի
2. Գալստյան Ասպետ Սաղաթելի
3. Բաղդասարյան Կարեն Լորիկի
4. Հայրապետյան Հայրապետ Նորայրի
5. Զեյնալյան Մասիս Արամայիսի

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Բաղդասարյան Նազիկ Մարատի
4. Ղուկասյան Արագած Արշավիրի
5. Միքայելյան Աննա Միքայելի
6. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
7. Դալլաքյան Արման Յուրիկի
8. Առաքելյան Վահե Վարդանի
9. Կարապետյան Արշակ Արամի
10. Սարգսյան Մասիս Պարոնիկի

Նիստը վարողը հայտարարեց, որ «ՀՀ Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 142.2.-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի ուժով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար է ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համարը՝ Դավիթ Արամայիսի Ղուլունցը և նիստի վարման նախագահությունը հանձնեց վերջինիս:

Դավիթ Ղուլունցը (այսուհետ՝ նիստը վարող) ներկայացրեց նիստում քննարկվելիք հարցերի օրակարգի նախագիծը:

ԼՍԵՑԻՆ.